Չորրորդ հաղորդում

Քրիստոսի Մարմնի միախառնումն ու իրականությունը

Գրվածքների ընթերցում. Ա Կրթ 1:2, 10:17ա, 12:12-13, 24, 27, Հվի 12:24, Փլպ 3:10, Եփս 4:20-21

I. «Աստված միախառնել է մարմինը»՝ Ա Կրթ 12:24.

Ա. Միախառնումը ոչ միայն բարձր ու խոր բան է, այլև շատ առեղծվածային՝ խ. 24:

Բ. «Միախառնել» բառը նշանակում է «կարգավորել», «ներդաշնակել», «համաչափել» և «միաձուլել», ինչը տարբերությունների կորուստ է ենթադրում:

Գ. Միախառնումը նշանակում է, որ մենք պետք է միշտ կանգ առնենք, որպեսզի հաղորդակցվենք ուրիշների հետ՝ Գրծ 2:42, Ա Կրթ 1:9, Ա Հվի 1:3, 7:

Դ. Մենք ոչինչ չպետք է անենք՝ առանց այն սրբերի հետ հաղորդակցվելու, որոնք կոորդինացվում են մեզ հետ, որովհետև հաղորդակցությունը կարգավորում է մեզ, ներդաշնակում է մեզ, համաչափում է մեզ և միաձուլում է մեզ՝ խ. 7:

Ե. Միախառնվելը նշանակում է, որ ուրիշները դիպչում են մեզ, իսկ մենք դիպչում եք ուրիշներին՝ անցնելով խաչով, գործելով Հոգով և ամեն ինչ անելով, որպեսզի բաշխենք Քրիստոսին՝ հանուն Նրա Մարմնի՝ Մտթ 10:38, 16:24, Գղտ 3:2, 5, Եփս 4:12:

Զ. Միախառնումը ոչ թե հասարակական մի բան է, այլ հենց Քրիստոսի միախառնումն է, ում վայելում, փորձառաբար ապրում և հաղորդ են լինում առանձին անդամները, շրջանի եկեղեցիները, համագործակիցները և երեցները՝ հմմտ Հռմ 16:1-16:

Է. Որպեսզի պահպանենք Քրիստոսի տիեզերական Մարմնի միասնությունը, պետք է միախառնվենք՝ Ա Կրթ 12:24:

Ը. Միախառնումն անհրաժեշտ է Քրիստոսի տիեզերական Մարմնի կառուցման համար՝ Հռմ 16:1-16, Ա Կրթ 12:20-21, 24, Կղս 4:16:

II. Հվի 12:24 և Ա Կրթ 10:17ա խոսքերը պատկերում ու բացահայտում են միախառնման անհրաժեշտությունն ու նշանակությունը.

Ա. Հվի 12:24-ում խոսվում է ցորենի հատիկի մասին, որը հողի մեջ ընկավ ու մեռավ և ցորենի շատ հատիկներ բերեց.

1. «Ցորենի հատիկ»-ը վերաբերում է Քրիստոսին՝ որպես աստվածային սերմի, որը բազում հատիկներ (Իրեն ընդունող մարդկանց) է առաջացնում, որոնք դառնում են Նրա օրգանական Մարմինը կազմող անդամները՝ Եփս 1:22-23, 5:30:
2. Քրիստոսը՝ որպես ցորենի հատիկը, մեռավ և հարության մեջ բազում հատիկներ առաջացրեց՝ Հվի 12:24.

   ա. Այս հատիկները պետք է աղացվեն ու միախառնվեն՝ ալյուր

դառնալով, որպեսզի հաց դառնան, որը խորհրդապատկերում է Քրիստոսի Մարմինը՝ Ա Կրթ 10:17ա:

բ. Մենք չպետք է ամբողջական հատիկներ մնանք. մենք պետք է կոտրվենք և աղացվենք՝ դառնալով շարմաղ ալյուր, որպեսզի կարողանանք ուրիշների հետ միախառնվել՝ հացի առաջացման համար. այս հացը Քրիստոսի Մարմինն է՝ 12:12-13, 27, Եփս 2:16, 1:22-23:

Բ. Պողոսի այն միտքը, որ եկեղեցին միախառնվում է՝ մեկ հաց, մեկ Մարմին դառնալով (Ա Կրթ 10:17ա), վերցված էր Ղևց 2:1-16-ում հացի ընծայի նախատիպից.

1. Հացի ընծայի ալյուրի ամեն մի մասը խառնվում էր յուղի հետ. դա միախառնումն է՝ խխ. 4-5:
2. Քրիստոսի կյանքն ու մեր անհատական քրիստոնեական կյանքը հանգեցնում են ընդհանրական մի բանի առաջացման՝ եկեղեցական կյանքի՝ որպես ընդհանրական հացի ընծայի, որը կազմված է հավատացյալներից, որոնք կոտրվել, աղացվել ու միախառնվել են՝ խխ. 1-2, 4, Ա Կրթ 12:12:

III. Միախառնման նպատակը բոլորիս Քրիստոսի Մարմնի իրականության մեջ բերելն է՝ Հռմ 12:5, Ա Կրթ 12:12-13, Եփս 2:16, 4:12, Կոլս 2:19.

Ա. Մենք պետք է տեղական եկեղեցիներում լինենք, որոնք միջոց են՝ մեզ Քրիստոսի Մարմնի իրականության մեջ բերելու համար՝ Ա Կրթ 1:2, 12:27:

Բ. Տիրոջ վերականգնման բարձրագույն կետը, որի շնորհիվ հնարավոր է Աստծու տնտեսության իրական, գործնական և փաստացի իրականացումը, այն է, որ Աստված ոչ թե բազմաթիվ ֆիզիկական տեղական եկեղեցիներ առաջացրեց, այլ օրգանական Մարմին՝ որպես Իր օրգանիզմը՝ Եփս 1:10, 22-23:

Գ. Տեղական եկեղեցիներն Աստծու հավիտենական տնտեսության նպատակը չեն. դրանք միջոց են, որոնք Աստված օգտագործում է, որպեսզի հասնի Իր տնտեսության նպատակին՝ Քրիստոսի Մարմնի կառուցմանը՝ Մտթ 16:18, Եփս 4:12, 16.

1. Եկեղեցիները միջոց են՝ մեզ Քրիստոսի Մարմնի մեջ բերելու համար՝ Ա Կրթ 1:2, 12:12-13, 27:
2. Եկեղեցիները Մարմինն են, բայց դրանք կարող են և չունենալ Քրիստոսի Մարմնի իրականությունը:

Դ. Տիրոջը հույժ անհրաժեշտ է, որ տեղական եկեղեցիներում արտահայտվի Քրիստոսի Մարմնի իրականությունը. եթե Մարմնի նշանակալի արտահայտություն չլինի, Տեր Հիսուսը չի վերադառնա՝ Եփս 1:22-23, 4:16, 5:27, Հյտ 19:7:

IV. Աստծու տնտեսության բարձրագույն կետը Քրիստոսի Մարմնի իրականությունն է՝ Եփս 1:22-23, 4:16.

Ա. Մեր միախառնվելու նշանակությունը Քրիստոսի Մարմնի իրականությունն է՝ Ա Կրթ 12:24.
   1. Այս իրականությունը Աստծու փրկագնած մարդկանց մի խումբ է, որոնք դարձվել են Աստված կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ՝ Հվի 1:12-13, Հռմ 8:16, Բ Պտ 1:4:
   2. Նրանք ապրում են ոչ թե իրենց շնորհիվ, այլ մեկ ուրիշ կյանքով՝ պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու կյանքով, ով մտնում է նրանց մեջ և նրանց ընդունում՝ որպես Իր կացարանը՝ Իր բնակատեղը՝ Բ Կրթ 13:14, Հվի 14:23, Եփս 2:21-22:

Բ. Քրիստոսի Մարմնի իրականությունը կատարելագործված Աստվածամարդկանց ընդհանրական ապրելակերպն է, որոնք իսկական մարդիկ են, բայց ապրում են ոչ թե իրենց կյանքով, այլ պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու կյանքով, ում հատկանիշներն արտահայտվում են նրանց առաքինությունների միջոցով՝ Բ Կրթ 13:9, 11, Եփս 4:12, Ա Պտ 5:10, Ա Հվի 4:12, 17-18.
   1. Աստվածամարդ Հիսուսն ապրում էր Իր ներսում եղող Աստծու կյանքով՝ դրա բոլոր հատկանիշներով հանդերձ, որն արտահայտվում էր որպես այս Աստվածամարդու առաքինությունները՝ Եփս 4:20-21:
   2. Այդ կյանքը սկզբնապես միայն Հիսուսի մեջ էր. այժմ այդ կյանքը վերարտադրվում է հավատացյալների մեջ, որոնք փրկագնվել ու վերածնվել են, և որոնք հիմա իրենց ներսում աստվածային կյանքն ունեն՝ 1:7, Հվի 3:6, Կղս 3:4:
   3. Կատարելագործված Աստվածամարդիկ նրանք են, ովքեր հասունության են հասել՝ մշտապես վարժվելով, որ մերժեն «ես»-ն ու մեկ ուրիշ կյանքով ապրեն՝ Քրիստոսի հարության կյանքով՝ Հվի 11:25:

Գ. Քրիստոսի Մարմնի իրականությունը Քրիստոսի հարության մեջ միաձուլվող ապրելակերպն է Եռամեկ Աստծու հետ վերածնված, փոխակերպված և փառավորված եռամաս Աստվածամարդկանց հավիտենական միության մեջ՝ հմմտ Դտվ 9:9, Սղմ 92:10.
   1. Այս միաձուլումը Քրիստոսի հարության զորության մեջ Քրիստոսի մահվանը կերպարանակցվելու ընդհանրական ապրելակերպն է՝ Փլպ 3:10:
   2. Այսպիսի միաձուլվող ապրելակերպը տեղի է ունենում Քրիստոսի հարության մեջ, իսկ այս հարության իրականությունը Հոգին է. այս հարությունը հավատացյալների մեջ է ներդնում ավարտունացած Աստծուն և նրանց մեջ ազատագրում մահին հաղթող կյանքը՝ Հվի 11:25:
   3. Կատարելագործված Աստվածամարդկանց այս ընդհանրական և միաձուլվող ապրելակերպը վերջնական ավարտունություն է ձեռք բերում Նոր Երուսաղեմում նոր երկնքում և նոր երկրում՝ որպես Աստծու մեծացումն ու արտահայտությունը հավիտենապես՝ Հյտ 21:1-2, 9-11:

4. Կատարելագործված Աստվածամարդկանց ընդհանրական ապրելակերպը՝ որպես Քրիստոսի Մարմնի իրականություն, ավարտելու է այս դարաշրջանը՝ եկեղեցու դարաշրջանը, և վերադարձնելու է Քրիստոսին, որպեսզի Նա գրավի երկիրը, տիրի ու կառավարի նրան այս Աստվածամարդկանց հետ թագավորության դարաշրջանում՝ Սղմ 24:1-2, 7-10, 72:1-8, 11, Հյտ 1:7, 14:14, 20:4:

© 2023 Living Stream Ministry